Անձնական և կրթական ուղի

Ես Աննա Սիրադեղյանն եմ։ Ծնվել և մեծացել եմ Տավուշի մարզի Սևքար գյուղում։ Դեռ մանկուց ինձ հաճախ եմ զգացել հասակակիցներիսից տարբերվող՝ թե՛ արտաքինով, թե՛ բնավորությամբ։ Ունեմ հազվադեպ հանդիպող հիվանդություն՝ Մոբիուսի սինդրոմ, որն արտահայտվում է դեմքի ասիմետրիայով և տեսողության հետ կապված խնդիրներով։ Երբ փոքր էի, հաճախ էի ինքս ինձ հարցնում՝ ինչո՞ւ եմ ես ուրիշ, ինչո՞ւ են մարդիկ ինձ երբեմն կարեկցանքով նայում, և ինչո՞ւ եմ տարբերվում մյուսներից։ Այդ հարցերը երկար ժամանակ ուղեկցում էին ինձ։ Սակայն տարիների ընթացքում այն, ինչ սկզբում ընկալում էի որպես իմ թուլություն, դարձավ իմ ուժի աղբյուր։ Ես սովորեցի չսահմանափակվել մարդկանց հայացքներով ու կարծիքներով, այլ սեփական արժեքը տեսնել իմ արարքների, ձգտումների և ձեռքբերումների մեջ։ Հենց այդ ճանապարհին էլ ձևավորվեցին իմ բնավորությունն ու կամքի ուժը։ Գուցե հենց այս փորձն էլ դարձավ բժշկության ճանապարհն ընտրելու առաջին և ամենախորքային պատճառներից մեկը։ Ես ցանկանում էի ավելի լավ հասկանալ իմ և ինձ նման մարդկանց խնդիրները, իսկ հետագայում՝ կարողանալ օգնել նրանց։ Ցանկանում էի, որ այն մարդը, ով առողջական կամ արտաքին առանձնահատկությունների պատճառով իրեն տարբեր է զգում, չհանդիպի միայն կարեկցանքի, այլ ստանա նաև մասնագիտական աջակցություն, հասկացված լինելու և ինքնավստահություն ձեռք բերելու հնարավորություն։ Դեռ փոքր տարիքից որոշել էի, որ մարդկանց կարծիքը չպետք է որոշի իմ ապագան։ Ես ընտրեցի սովորելու ճանապարհը՝ հավատալով, որ կրթությունն ինձ համար լինելու է ոչ միայն մասնագիտություն ձեռք բերելու, այլև որպես մարդ ձևավորվելու ամենակարևոր միջոցներից մեկը։ Հավատում էի, որ գիտելիքը կարող է մարդուն դարձնել ավելի ուժեղ, ինքնուրույն և գիտակից, իսկ լավ կրթությունը՝ օգնել սեփական ճանապարհը կերտել անկախ հանգամանքներից։ Դպրոցական տարիների ընթացքում սկսեցին իմ առաջին հաջողությունները։ Մասնակցում էի տարբեր առարկայական օլիմպիադաների, ձգտում էի սովորել ավելի շատ և ավելի լավ։ Յուրաքանչյուր ձեռքբերում ինձ համար պարզապես գնահատական կամ մրցանակ չէր. այն ապացույցն էր, որ ես կարող եմ հաղթահարել իմ առջև դրված սահմանափակումներն ու վստահորեն առաջ շարժվել։ Ժամանակի ընթացքում փոխվեց նաև շրջապատիս վերաբերմունքն իմ նկատմամբ։ Այն հայացքները, որոնցում երբեմն կար կարեկցանք, աստիճանաբար փոխարինվեցին հարգանքով և հիացմունքով։ Այդ փոփոխությունն ինձ կարևոր մի բան սովորեցրեց. մարդուն չի կարելի գնահատել նրա արտաքինի հիման վրա։ Մարդու իրական արժեքը բացահայտվում է նրա վերաբերմունքի, կատարած գործերի, նպատակների և այն բարության մեջ, որը նա կարողանում է փոխանցել ուրիշներին։ Ինձ համար հատկապես կարևոր է եղել նաև այն գիտակցումը, որ սեփական դժվարությունները հաղթահարելն արժեքավոր է, բայց ուրիշների դժվարությունների հանդեպ անտարբեր չլինելը՝ առավել կարևոր։ Մարդկանց օգնելու, նրանց ցավը հասկանալու և հնարավորության սահմաններում նրանց կողքին լինելու ցանկությունն իմ մեջ ձևավորվել է դեռ մանկուց։ Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր մարդ կոչված է բարին գործելու, և այդ համոզմունքն ինձ ուղեկցում է մինչ օրս։ Այսօր, հետ նայելով իմ անցած ճանապարհին, հասկանում եմ, որ այն, ինչ ժամանակին ինձ ստիպում էր հարցնել՝ «ինչո՞ւ եմ ես ուրիշ», ի վերջո դարձավ այն ուժը, որն օգնեց ինձ հասկանալ՝ ով եմ ես և ինչ եմ ուզում անել իմ կյանքում։ Իմ տարբերությունը դարձավ իմ ուժը, դժվարությունները՝ իմ փորձը, իսկ մարդկանց օգնելու ցանկությունը՝ իմ կյանքի կարևորագույն նպատակներից մեկը։ Հենց այդ արժեքներով էլ ես ընտրեցի բժշկությունը՝ մի մասնագիտություն, որի հիմքում, իմ համոզմամբ, միայն գիտելիքն ու հմտությունը չեն։ Բժիշկ լինել նշանակում է նաև կարողանալ լսել, հասկանալ, կարեկցել և մարդուն ուժ տալ այն պահին, երբ նա դրա կարիքն ամենից շատ ունի։

Դպրոցական վերջին տարիների ընթացքում ավելի ու ավելի էի համոզվում, որ ցանկանում եմ բժիշկ դառնալ։ Ես ուզում էի ոչ միայն օգնել ու բուժել ինձ և ինձ նման մարդկանց, այլև իմ գիտելիքներն ու կարողությունները ծառայեցնել բժշկական օգնության կարիք ունեցող այլ մարդկանց։ Մինչև 19 տարեկանը ուզում էի դառնալ պլաստիկ վիրաբույժ և միկրովիրաբույժ՝ հետագայում իմ հիվանդության հետ կապված խնդիրները հաղթահարելու և նմանատիպ դժվարությունների առջև կանգնած մարդկանց օգնելու համար։ Սակայն 19 տարեկանում սկսեցի լրջորեն մտածել նաև ուռուցքաբանության մասին։ Այս ընտրության վրա մեծ ազդեցություն ունեցավ իմ ընտանիքի անձնական փորձը։ Ինձ համար ամենաթանկ մարդկանցից մեկը՝ տատիկս, կյանքից հեռացավ քաղցկեղի պատճառով։ Նրա կորուստը խորը հետք թողեց և ստիպեց ավելի խորը մտածել այն մասին, թե ինչպես կարող եմ ապագայում իմ

մասնագիտությամբ օգնել մարդկանց պայքարել այդ հիվանդության դեմ։ Մինչև դպրոցն ավարտելն իմ առջև ձևավորվել էր բժշկության երկու կարևոր ուղղությունների միջև ընտրության երկընտրանք՝ պլաստիկ վիրաբուժություն և միկրովիրաբուժություն, թե՞ ուռուցքաբանություն։ Երկու ուղղություններն էլ ինձ համար պարզապես մասնագիտություններ չէին. դրանք իմ անձնական փորձից, ապրումներից և մարդկանց օգնելու անկեղծ ցանկությունից ծնված նպատակներ էին։ 2018 թվականին ավարտեցի Սևքարի միջնակարգ դպրոցը՝ արդեն հստակ գիտակցելով, որ ցանկանում եմ իմ հետագա կյանքը նվիրել բժշկությանը և մարդկանց օգնելու գործին։Գյուղից Երևան տեղափոխվելը հեշտ չէր՝ հատկապես ֆինանսական և սոցիալական դժվարությունների պատճառով, սակայն այդ պայմանները երբեք չեն թուլացրել իմ վճռականությունը և կամքի ուժը։ Ներկայումս վարձով բնակվում եմ Երևանում համատեղության կարգով՝ եղբորս հետ։ Լինելով միակողմանի ծնողազուրկ՝ վաղ տարիքից սովորել եմ պատասխանատվություն կրել իմ ընտրությունների և ապագայիս համար, ինչը ձևավորել է իմ աշխատասիրությունն ու կամքի ուժը։ Ինձ ոգեշնչող մարդկանցից էին մայրիկս, եղբայրս, պապիկս, որոնք և՛ դժվար, և՛ ուրախ պահերին միշտ իմ կողքին էին և ոգևորում էին ինձ։ Ընդունվելով Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան վճարովի հիմունքներով՝ ուսման առաջին տարվա ավարտին իմ աշխատասիրության և բարձր առաջադիմության շնորհիվ տեղափոխվեցի անվճար համակարգ և մինչև 6-րդ կուրսի ավարտ ուսումս շարունակեցի անվճար հիմունքներով։ Համալսարանական տարիներին ակտիվորեն ներգրավված եմ եղել կամավորական գործունեության մեջ՝ ինչպես համալսարանում, այնպես էլ բժշկական տարբեր կազմակերպություններում, ինչը էլ ավելի է ամրապնդել իմ մասնագիտական կողմնորոշումը։ Սակայն, ավարտելով հիմնական բժշկական կրթությունս և երկար մտորելով, ես ընտրեցի նյարդաբանություն ուղղությունը։ Կրկին անդրադառնալով իմ նեղ մասնագիտության ընտրությանը՝ չեմ կարող չնշել 2020 թվականի արցախյան պատերազմի մասին։ Պատերազմը իր հետքը թողեց բոլորիս վրա։ Վերջին 6 տարիներին հասարակության մեջ լայն տարածում գտան հետպատերազմյա նյարդաբանական և հոգեբանական խնդիրները, որոնց բախվում են ոչ միայն պատերազմի մասնակիցները, այլ նաև նրանց ընտանիքի անդամները և մենք բոլորս։ Ես հասկանում եմ այդ մարդկանց, որովհետև այդ խնդիրներին առնչվում էի ոչ միայն հեռվից դիտելով, այլ նաև ընտանիքում՝ եղբորս հետպատերազմյա ապրումները տեսնելով։ 2024 թվականին ընդունվել եմ ԵՊԲՀ-ի կլինիկական օրդինատուրա նյարդաբանություն մասնագիտությամբ վճարովի հիմունքներով։ Ֆինանսական սահմանափակումների պատճառով ուսումս շարունակել եմ Առողջապահության նախարարության նպատակային ծրագրի շրջանակում, որի համաձայն պարտավորվում եմ ավարտելուց հետո աշխատել մարզում՝ որպես բժիշկ 3 տարի ժամկետով։ Կարծում եմ ՀՀ մարզերում մարդիկ իրավունք ունեն ստանալ որակյալ բուժօգնություն անկախ իրենց բնակության վայրից։ Կլին. օրդինատուրայի 1-ին տարվա ուսման վարձը՝ 650.000 դրամ, այնուամենայնիվ, պետք է մուծեմ մինչև կլինիկական օրդինատուրայի ավարտը։ Ներկայումս ուսմանս հետ մեկտեղ աշխատում եմ Երևանի 1-03 շտապ բժշկական օգնության ծառայությունում, որտեղ ամեն հերթապահություն ինձ ավելի է համոզում, որ ճիշտ մասնագիտություն եմ ընտրել։ Մարդկանց լսելը, նրանց օգնելը և կյանքեր փրկելը ինձ համար ոչ միայն աշխատանք է, այլև առաքելություն։

Ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել SOAR կազմակերպությանը, և հատկապես՝ SOAR Jacksonville համայնքին, այս կարևոր և ոգեշնչող նախաձեռնության համար։ SOAR Jacksonville-ի կրթաթոշակային ծրագիրը հրաշալի հնարավորություն է ծնողազուրկ ուսանողների և աշակերտների համար։ Նոր միջավայրում և նոր քաղաքում իրենց կյանքը շարունակող երիտասարդները հաճախ ստիպված են հաղթահարել բազմաթիվ սոցիալական և ֆինանսական դժվարություններ։ Այդպիսի պայմաններում կրթական աջակցությունը ոչ միայն կարևոր օգնություն է, այլև վստահության, հույսի և նոր հնարավորությունների աղբյուր։ Ես նույնպես դիմել էի այս ծրագրին՝ գիտակցելով, որ ամբողջությամբ չեմ համապատասխանում ծրագրի սահմանված չափանիշներին։ Այնուամենայնիվ, ինձ հնարավորություն տրվեց մասնակցելու հարցազրույցի։ Կազմակերպիչները մեծ ուշադրությամբ լսեցին իմ պատմությունը, հասկացան իմ անցած ճանապարհը և իրենց ջերմ ու անկեղծ խոսքերով մեծապես ոգևորեցին ինձ։ Այդ հանդիպումն ինձ համար արժեքավոր էր հատկապես մարդկային ջերմության և աջակցության առումով։ Հատուկ շնորհակալություն եմ ցանկանում հայտնել նաև իմ հայտը դիտարկելու և այն SOAR Global ծրագրին ներկայացնելու համար։ Ինձ համար մեծ նշանակություն ունի այն փաստը, որ իմ պատմությունը լսվեց, ես արժանացա ուշադրության և հնարավորություն ստացա ներկայացնել իմ պատմությունն ավելի մեծ լսարանի։

Շնորհակալ եմ SOAR-ին և SOAR Jacksonville համայնքին՝ իրենց կատարած կարևոր աշխատանքի և հոգատար վերաբերմունքի համար։